ՓԵՏՐՎԱՐ 2021 №43

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ 43

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
NEW GENERATION HUMANITARIAN NGO

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԴՎՈԿԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈՒԺՈՒՄ ԵՎ ԴԵՂՈՐԱՅՔ.

ՆԵՐԶԱՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԳԱՅՈՒՆ ՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԴԱՏԱՐԱՆԸ ԲԱՎԱՐԱՐԵՑ ԲՈՂՈՔԸ... ԳՈՐԾԸ ԿՈՒՂԱՐԿՎԻ ՆՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ ԸՆՏՐՎԵԼ Է ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ԱՆԴԱՄ

Լուսանկարը UNAIDS-ի, թարգմանությունը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի

ՋՐՈ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԱՅՍ ՏԱՐԻ UNAIDS-Ը ԸՆԴԳԾՈՒՄ Է

եկամուտի, սեռի, տարիքի, առողջական վիճակի, զբաղվածության, կարողությունների, սեռական կողմնորոշվածության, թմրամիջոցների օգտագործման, գենդերային ինքնության, ռասայի, դասի, էթնիկ պատկանելիության և կրոնի հիմքով անհավասարությունները, որոնք շարունակում են գոյություն ունենալ աշխարհում:Խտրականությունը և անհավասարությունը չափազանց կապված են իրար հետ: Խտրականության շատ տեսակներ կարող են բերել մի շարք անհավասարությունների:Այսպիսով, չափազանց կարևոր է անհավասարությունների նվազեցումը խտրականության դեմ պայքարում:Վերջ դնենք անհավասարություններին:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԴՎՈԿԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի փետրվարի 12-ին տեղի ունեցավ «SUS և տրանս* անձանց տրամադրվող առողջապահական և սոցիալական ծառայությունների վերաբերյալ բյուջետային վերլուծությունների և պետական բյուջեի վերլուծության միջազգային ուղեցույցի ներկայացում» հանդիպում-քննարկումը, որը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Եվրասիական տարածաշրջանային կոնսորցիումի մաս կազմող Վնասի նվազեցման եվրասիական ասոցիացիայի (EHRA) դրամաշնորհի շրջանակներում քաղաքացիական հասարակության ցանցերի Ռոբերտ Կարրի հիմնադրամի (RCF) ֆոնդերի հաշվին: Հանդիպմանը մասնակցում էին SUS և տրանս* անձանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների, ՀՀ Առողջապահության նախարարության, Միջոցառումները համարգող հանձնաժողովի (ՄՀՀ), ինչպես նաև SUS և տրանս* համայնքների ներկայացուցիչներ:

Հանդիպման սկզբում բացման խոսքով հանդես եկավ ծրագրի համակարգող Հմայակ Ավետիսյանը՝ շնորհակալություն հայտնելով հյուրերին հրավերը ընդունելու և հանդիպմանը ներկա գտնվելու համար: Նա ներկայացրեց բյուջետային ադվոկացիայի ոլորտում իրականացված աշխատանքները, ինչպես նաև հյուրերին ծանոթացրեց հանդիպման օրակարգին:

Փորձագետ Մարիամ Մուրադյանը ներկայացրեց «SUS և տրանս* անձանց տրամադրվող առողջապահական և սոցիալական ծառայությունների համար բյուջետային ադվոկացիայի միջազգային փորձը» զեկույցը՝ խոսելով Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի այլ երկրների բյուջետային ադվոկացիայի պատմությունից, ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի անցումային հաջողված դեպքերից, մեթոդներից: Մյուս փորձագետ Անահիտ Հարությունյանը ներկայացրեց «SUS և տրանս* անձանց տրամադրվող առողջապահական և սոցիալական ծառայությունների համար Հայաստանի ազգային բյուջեի ֆինանսական բացերը» վերլուծությունը՝ ներկայացնելով հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդները, վերլուծության ընթացքում դիտարկված փաստաթղթերը, ֆինանսական բացերը, ինչպես նաև առաջարկություններ և եզրակացություն:

Հանդիպման մասնակիցները ակտիվ քննարկում ունեցան վերլուծությունների վերաբերյալ, հանդես եկան առաջարկություններով և դիտարկումներով, որոնք հաշվի կառնվեն հետագայում ֆինանսական բացերը հասցեավորող ադվոկացիոն ճանապարհային քարտեզ մշակելիս փորձագետ Անահիտ Հարությունյանի կողմից: Հանդիպումն անցավ ակտիվ հարց ու պատասխանի, քննարկումների մթնոլորտում:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈՒԺՈՒՄ ԵՎ ԴԵՂՈՐԱՅՔ.

2021թ.-ի հունվարի 18-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ (ՆՍՀԿ) է դիմել օտարերկրյա քաղաքացի Ա.Ս-ն (անունը փոխված է): Վերջինս ՄԻԱՎ-ի լնդային տրանսուդատի հետազոտություն է անցել և արդյունքում հայտնաբերվել է ՄԻԱՎ դրական: Քաղաքացին ուղորդվել է ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ՝ հետագա հետազոտությունների և ՄԻԱՎ-ի հաստատման դեպքում դիսպանսերային հսկողության անցնելու և բուժում ստանալու համար: Հետազոտության արդյունքում վերջինիս մոտ ՄԻԱՎ դրական կարգավիճակը հաստատվել է, սակայն շահառուին անհրաժեշտ դեղորայքը չի տրամադրվել, քանի որ վերջինս չի ունեցել ՀՀ կացության քարտ: Արդյունքում, Ա.Ս-ն իրավաբանական աջակցություն ստանալու նպատակով դիմել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ: ՆՍՀԿ-ն 2021թ.-ի հունվարի 29-ին գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն խնդրելով.

- Ա.Ս-ին տրամադրել բժշկական օգնություն ու սպասարկում՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով: 2021թ.-ի փետրվարի 8-ին ստացվել է ՀՀ առողջապահության նախարարության գրությունը, համաձայն որի առաջարկվել է Ա.Ս-ին բժշկական օգնությունն ու սպասարկումը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով կազմակերպելու նպատակով դիմել Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ (ԻՀԱԿ):

- ՆՍՀԿ-ն դիմել է ԻՀԱԿ: Արդյունքում Ա.Ս.-ն ընդգրկվել է բուժման և խնամքի ծառայություններում: ՆՍՀԿ-ն շարունակում է քաղաքացուն տրամադրել իրավաբանական աջակցություն կացության քարտի ձեռբերման գործընթացում:

- *«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում ՀՀ Առողջապահության նախարարությանը և «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ին արդյունավետ համագործակցության համար:*

- **Պարզաբանում. «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի հոդված 8.** ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց օրգանիզմում ՄԻԱՎ-ի հայտնաբերման դեպքում նրանց բուժումը կազմակերպվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- **ՀՀ առողջապահության նախարարի 22.11.2013 թվականի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության եւ սպասարկման շրջանակներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման եւ բուժման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» № 75-Ն որոշման 13-րդ կետ** ՀՌՎ բուժումն անվճար է և տրամադրվում է ցուցում ունեցող բոլոր հիվանդներին, որոնք տվել են իրենց համաձայնությունը բուժման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո:

ՆԵՐԶԱՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԳԱՅՈՒՆ ՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի

Բժշկական ծառայությունների և օգնության տրամադրման ոլորտը, ինչպես բազմաթիվ այլ ոլորտներ Հայաստանում, ունի շատ բացեր խոցելի խմբերի սպասարկման համատեքստում: Իրավիճակը ավելի բարդ է տրանս անձանց դեպքում, քանի որ երկրում գերիշխող խտրականությանն ու կարծրատիպային վերաբերմունքին զուգահեռ, որը, ինչ խոսք, իր անխուսափելի ազդեցությունն ունի նաև առողջապահական ոլորտի վրա, կան նաև բազմաթիվ օրենսդրական բացեր տրանս անձանց առողջապահական իրավունքի ապահովման և իրականացման ոլորտում: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է գենդերային ինքնության ճանաչման և գենդերի հաստատմանն առնչվող բժշկական միջամտությունների օրենսդրական կարգավորման բացակայությանը, ինչը իր հերթին հանգեցնում է նաև հայաստանյան բժիշկների շրջանում տրանս անձանց բժշկական օգնության տրամադրմանն առնչվող մասնագիտական վերապատրաստումների և իրազեկվածության բացերի:Այս բացը լրացնելու նպատակով 2021թ.-ի փետրվարի 18-20-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կազմակերպել էր աշխատանքային հանդիպում ՀՀ ներզատաբանների հետ: Հանդիպմանը ներգրավված էին մասնակիցներ՝ բժիշկ-ներզատաբաններ, ՀՀ Երևան քաղաքից և մարզերից՝ տեղեկատվությունը բոլոր մարզերում առավել հասանելի և լայնամասշտաբ դարձնելու նպատակով:

Աշխատանքային հանդիպումը վարում էին հրավիրված փորձագետներ Մոսկվայից՝ Եվդոկիա Ցվետկովան, ով հանդիսանում է բժիշկ-ներզատաբան, բժշկական տեղեկատվության և գիտական հաղորդակցության մասնագետ, և Ինգա Գրինը, ով ամուսնության և ընտանեկան հարցերով հոգեբանական գիտությունների դոկտոր է:Հանդիպումը սկսվեց ՀՀ ԱՆ էնդոկրինոլոգիայի գծով խորհրդատու Նաիրա Վ. Գոգյանի ողջույնի խոսքով: Վերջինս շեշտեց տվյալ հանդիպման թեմայի շատ զգայուն, միևնույն ժամանակ կարևոր և արդիական լինելը: Այնուհետև, մասնակիցներին ողջունեց ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը՝ շնորհակալություն հայտնելով մասնակցության համար և մաղթելով արդյունավետ հանդիպում:Հանդիպման առաջին օրը՝ փետրվարի 18-ին, Եվդոկիա Ցվետկովան մասնակիցներին ծանոթացրեց տրանս անձանց հետ տարվող հորմոնալ թերապիային՝ խոսելով մասկուլինիզացնող և ֆեմինիզացնող հորմոնալ թերապիաներից, դրանց ռեժիմների ու սխեմաների մասին, կողմնակի ազդեցություններից և հնարավոր բարդություններից: Անդրադարձ կատարվեց նաև անհատական մոտեցմանը՝ ոչ բինար մարդկանց, դեռահասների և ծեր մարդկանց հետ տարվող հորմոնալ թերապիայի առանձնահատկություններին: Օրը եզրափակվեց հարց ու պատասխանի միջոցով:

Փետրվարի 19-ին Ցվետկովան խոսեց գենդերի հաստատման միջամտությունների, համաշխարհային վիճակագրության, հիվանդությունների միջազգային դասակարգման (ՀՄԴ10-ին և ՀՄԴ11-ին), Ռուսաստանում ախտորոշման առանձնահատկությունների և բժշկական օգնություն տրամադրելու կարգի մասին: Օրը եզրափակվեց 2 երկրների փորձի քննարկումներով և հարց ու պատասխաններով: Դասընթացի վերջին օրը ՝ փետրվարի 20-ին, հանդիպման փորձագետն էր Ինգա Գրինը: Օրվա թեման էր տրանս անձանց հետ աշխատանքի մասնագիտական էթիկան:

Թեմայի շրջանակներում ներկայացվեց տրանսգենդեր հասկացությունը պատմական տեսանկյունից և այսօր, փոփոխությունների պատմությունը տերմինաբանության պրիզմայով, ԱՀԿ-ի դիրքորոշումը, տրանսգենդերության դեպաթոլոգիզացումը: Անդրադարձ կատարվեց շրջանակային փաստաթղթերին՝ ՀՄԴ-10-ին, ՏԱՀՄԱ (WPATH) ստանդարտներին, գենդերային դիսֆորիայի ախտորոշմանը: Քննարկվեցին նաև տրանսզգայունության և տրանսստակտիկության հասկացությունները, լավագույն փորձերը տրանս հաճախորդների հետ աշխատանքում:

Թեմաների տեսական ներկայացումից զատ՝ իրականացվեց նաև գործնական պարապմունք՝ խմբային աշխատանքներով: Հանդիպման ավարտին փորձագետը պատասխանեց մասնագետներին հուզող հարցերին:Մասնակիցներից շատերը փաստեցին տեղեկատվության պակասը, և շնորհակալ էին այս հանդիպման միջոցով տվյալ բացը լրացնելու համար տրված հնարավորության համար: Օրվա ավարտին մասնակիցներին տրվեցին մասնակցության վկայականներ: Աշխատանքային հանդիպումը անցավ բավականին արդյունավետ քննարկումների մթնոլորտում, և անշուշտ, իր դրական ազդեցությունը կունենա մասնակիցների կողմից տրանս անձանց հետ աշխատանքը առավել պրոֆեսիոնալ և իրազեկ կազմակերպելու հարցում:

ԴԱՏԱՐԱՆԸ ԲԱՎԱՐԱՐԵՑ ԲՈՂՈՔԸ... ԳՈՐԾԸ ԿՈՒՂԱՐԿՎԻ ՆՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (Դատարան) ավարտվել է Ա.Մ.-ի (անունը փոխված է) վերաբերյալ քննիչ Ա.Ասատրյանի որոշումը վերացնելու մասին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ (ՆՍՀԿ) փաստաբան Արա Ղարագյոզյանի ներկայացրած բողոքի քննությունը: 2020թ.-ի նոյեմբերի 27-ին Դատարանը բավարարել է փաստաբան Արա Ղարագյոզյանի բողոքը: Դատարանի որոշմամբ գործը կուղարկվի նոր քննության: Մինչ օրս Դատարանի կողմից չի ուղարկվել որոշումը:

Գործի նախապատմություն:

Ա.Մ.-ն այտնել է, որ իրեն հանցագործություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Կենտրոնի» բաժին, բերման ենթարկելու որոշումը ցույց չեն տվել: Ա.Մ.-ի ենթադրալ սեռական կողմնորոշմամբ պայմանավորված նրան ոստիկանության բաժանմունք բերման ենթարկելիս ոստիկանության աշխատակիցները չարաշահելով իրենց պաշտոնեական դիրքը

անհամաչափ ուժ են կիրառել՝ մինչև ոստիկանության բաժին հասնելը հարվածել են և հայհոյել: Այդ ամենը շարունակվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Կենտրոնի» բաժնում: Ոստիկանության բաժնի աշխատակիցները Ա.Մ.-ին թույլ չեն տվել օգտվել պաշտպան ունենալու իր իրավունքից: Վերջիններս ֆիզիկական և հոգեբանական բռնության ենթարկելով ստիպել են իրենց ասածով բացատրություն և ցուցմունք տալ, սպառնալով, որ հակառակ դեպքում նրա համար շատ վատ է լինելու: Դեպքի առթիվ Ա.Մ.-ն 2020թ.-ի հունվարի 29-ին հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն: 2020թ.-ի մարտի 15-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ: Ռ.Ս.-ն ճանաչվել է տուժող: 2020թ.-ի մայիսի 30-ին ՀՔԾ քննիչ Ա.Ասատրյանը որոշում է կայացրել քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի

ՄԻԱՎ-ը՝ Մարդու իմունային անբավարարության վիրուսը, ժամանակին ախտորոշելու դեպքում լիովին վերահսկելի է, այնինչ մինչ օրս շատերը ՄԻԱՎ-ը նույնացնում են ՁԻԱՀ-ի՝ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի հետ և ախտորոշումը համարում մահվան դատավճիռ: Իրականում ՁԻԱՀ-ը ՄԻԱՎ-ի վերջնային փուլն է:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ պարբերաբար հետազոտվելը կօգնի ժամանակին հայտնաբերել և վերահսկել այն: 2021թ.-ի փետրվարի 24-ին ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում» (ԻՀԱԿ) տեղի ունեցավ հերթական վերապատրաստման դասընթացը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) կողմից իրականացվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի խորհրդատուների համար: Դասընթացը կարևոր է նրանով, որ անմիջականորեն թիրախային խմբերի հետ աշխատող անձինք, այս դեպքում՝ աութրիչ աշխատակիցները, ամրապնդում են ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրենց գիտելիքների պաշարներն ու ձեռք են բերում համապատասխան մասնագիտական հմտություններ իրենց իսկ շահառուների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցկացնելու համար: Սա իր հերթին հնարավորություն է ստեղծում այս հետազոտությունը դարձնել առավել հասանելի այն խմբերի համար, որոնց հետ աշխատում է կազմակերպությունը: Դասընթացը բաժանված էր տեսական և գործնական մասերի: Առաջին հատվածում ԻՀԱԿ Համաճարակաբանության բաժնի վարիչ Տիգրան Ուգուջյանը անդրադարձավ ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի իրավիճակին Հայաստանում, խոսեց ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերից, ՄԻԱՎ-ի կանխարգելումից և թեստավորման կարևորությունից, բուժման ընթացքից, ինչպես նաև ներկայացրեց սեռական ճանապարհով փոխանցվող վարակների վերաբերյալ արված հետազոտություններ:

Դասընթացը շարունակեց ԻՀԱԿ աշխատակից Մարինե Ասրյանը, որը խոսեց աութրիչ աշխատանքից, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության հիմնական սկզբունքներից ու հմտություններից, ինչպես նաև թեստերի տարբեր պատասխանների դեպքում խորհրդատվության առանձնահատկություններից:

Օրվա երկրորդ հատվածում ԻՀԱԿ բժշկուհի Ելենա Սիլկան մասնակիցներին ներկայացրեց ՄԻԱՎ վարակի կլինիկական ընթացքը, հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժման սկզբունքները և ՀՌՎ բուժման նպատակները: Այնուհետև բժշկուհի Թամարա Հովսեփյանի հետ մասնակիցները բացահայտեցին ինքնաթեստավորման առանձնահատկությունները, սովորեցին հետազոտության արդյունքների ճիշտ մեկնաբանումը, գործնականում իրականացրին թեստավորում և ծանոթացան ՄԻԱՎ-ի ախտորոշման լաբորատորիայի աշխատանքներին:

Հիշեցնենք, որ 2017 թվականի օգոստոսից ՆՍՀԿ-ի շահառուներն արդեն իսկ հնարավորություն ունեն անվճար, գաղտնի և անանուն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնել լնդային տրանսուդատի արագ թեստերի միջոցով: Սա ենթադրում է, որ որպես խորհրդատու վերապատրաստված աութրիչ աշխատակիցը կարող է հետազոտություն իրականացնել ինչպես ՀԿ-ի գրասենյակում, այնպես էլ շահառուի տանը և այն վայրերում, որտեղ հնարավոր է ապահովել հետազոտության իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները՝ ջերմաստիճան, լուսավորություն, գաղտնիություն և այլն»:

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ ԸՆՏՐՎԵԼ Է ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ԱՆԴԱՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ ներկայացուցիչ Արման Սահակյանը 2021թ. փետրվարին ընտրվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամ:Ա. Սահակյանը ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, ինչպես նաև առավել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության ոլորտներում: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Դիտորդների խմբի հետ համագործակցում է 2013 թվականից:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա.ՍԱՀԱԿՅԱՆԻ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋԻՑ